**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՕՐԵՆՔԸ**
**«ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՄԱՍԻՆ» -ՕՐԵՆՔՈՒՄ**
**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ 2000 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ ՀՕ-97 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 29-րդ հոդվածում «Հանձնաժողովի աշխատակազմ» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «Հանձնաժողով» բառով՝ համապատասխան հոլովաձևերով:

**Հոդված 2.** Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 3.** Օրենքի 40-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 7-րդ կետում «աշխատակազմի ընդհանուր» բառերը փոխարինել «Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով պետական մարմնի» բառերով.

2) 1-ին մասի 8-րդ կետից հանել «աշխատակազմի» բառը:

**Հոդված 4.** Օրենքի 44-րդ հոդվածի՝

ա) 5-րդ մասում «աշխատակազմի ղեկավարը» բառերը փոխարինել «գլխավոր քարտուղարը» բառերով.

բ) 11-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել ~~նոր~~հետևյալ խմբագրությամբ.

«Հանձնաժողովի նիստերը արձանագրվում են».

գ) 11-րդ մասի 4-րդ նախադասությունը շարադրել ~~նոր~~հետևյալ խմբագրությամբ.

«Հանձնաժողովում վարվում է Հանձնաժողովի որոշումների գրանցամատյան:»:

**Հոդված 5.** Օրենքի 45-րդ հոդվածի՝

1) վերնագրում «աշխատակազմը» բառը փոխարինել «կառուցվածքային ստորաբաժանումները» բառերով.

2) 1-ին մասի 1-ին նախադասությունում «աշխատակազմի» բառը փոխարինել «կառուցվածքային ստորաբաժանումների» բառերով.

3) 2-րդ մասից հանել «աշխատակազմի» բառը:

**Հոդված 6.** Օրենքի 45.1 հոդվածի 19-րդ մասում «Հանձնաժողովի աշխատակազմը» բառերը փոխարինել «Հանձնաժողովը՝ կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով» բառերով:

**Հոդված 7.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: